

մանին ու չի գայ նայ տայ 3. 00 մանրի, այս ինքն, իրեք մանրի մանրքի ճուրում. արաջը տայ ճուրում, անոր ետև այլ ի երգֆնայ, ինչեիցէ, ու ճուրումն ղնանին է. ու երկուսումն չի գայ նայ 6. 00 մանարի ճուրում» :

« Դարձեալ ալ ի օղկայ փէճաթ ալ պիգաիկ, օր կայ, այլ ի քաղքինը. անպէս է խորհուրդը, օր ուզէնայ մէկնի որն օր ձենէ զատառդան նայ աբուգրաքմն տայ ու առնու ու ձէնէ. ու բուդրաքը Աղանուն է » :

Դարձեալ թէ օր լլայ կէս գոլայի վրայ գիրն, նայ ա մըլ ունենայ տալու ու զոէլադօրիան՝ ունէնայ փէճաթէլու նօտարիշը ու աղան. ու տան տալիճուն ձենն, օր տանի պիւրօլին. ու պիւրօլն արէրգօլադ՝ պանէ ու պի բացօլի ղատառտանին դիմաց և պի գարդան ու պի կարին զպատաստանը » :

Ա. Փիփաս

ՔՈԼՈՄՊԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ Ի ԾԻԳԱԿՕ

ԵԼԵԲՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՒՐ ԵՇԷՔՆ

(Տես յ'էջ 538)

ՔՈԼՈՐ հանդիսից այս ընդարձակագոյնն եւ մեծագոյնն, որ ստուգու մարդկային հանճարոյ ամենամեծ արդիւնքներն յինքեան կը բալանդակէ, իրաւամբ « Աշխարհահանդէս » եւ « Տիեզերահանդէս » կրնայ յորջորջուիլ, եւ յորջորջուած իսկ է, կը տարբերի յայլ նմանեաց որ յառաջ քան զայս էին՝ ելեքտրական հրաշալեօք, որք ի ցոյց դրուած են :

Ելեքտրականութիւնն որ դեռ նոր սթափած իւր մանկութենէն՝ եւ յառայգ պատանեկութիւն թեւակոխած է՝ կը ցուցնէ անուն հասակի ամէն հանգամանք : Խոստամալից է ելեքտրականութիւն, եւ մարդիկ իրաւամբ մեծայոյս կը սպասեն այն փառաւոր աուր գալստեան՝ որ վաղ ընդ փոյթ պիտի արշուրտէ գիտական աշխարհի վրայ եւ յեղաշրջէ ամէն ինչ : Չեմ կարծեր թէ վառուուն երևակայութեան մը հիւսուածքն է այն՝ զոր մասնագէտք կրկին եւ կրկին արտայայտած են գիտութեանց այս կրտսերագոյն մասնաճիւղին նկատմամբ : Չեմ կարծեր ըսի, վասն զի ինչ որ հերուն անհաւատալի խոստումն կամ խաբուսիկ երազ կը նկատէինք, այսօր իրականացած կը տեսնենք : Յրանքլին այսօր ապշութեամբ պիտի հիանայ երբ այց մը տայ յայն որրան, ուր ելեքտրականութիւնն գործող ոյժն է. պիտի հիանայ տեսնելով որ սերմիկն զոր սերմանեց ինքն՝ անած եւ ուռնացած է մեծապէս :

1. Տեղեկագիր, աղբրագիր :

2. Լնիքը կոտրել, բանալ :

Այս շէնքին ճակատն Վարչական շէնքին հիւսիսային կողման զուգահեռական է, եւ մին է այս դարու վերջին տասնեակի հրաշալեաց, որոց ճակատներն կը յօրինեն պատուայ « փառահեղ գաւիթն » շուրջ արհեստական լճակին (lagoon)։ Շէնքի վան Պրունթ ճարտարապետն է այս շէնքին, եւ միւս շէնքերու ճարտարապետաց հանճարոց նման ինքն ալ մեծ յաջողութեամբ կարող եղած է դասընտիր (classic) արդիւնք մը յառաջ բերել, փոխ առնելով կորնթական բնտիր ճաշակէն։ Շէնքին երկայնութիւնն ձգուած է հարաւ ի հիւսիս, եւ չորս կողմանց վրայ ալ ունի դռներ։ սակայն գեղեցկագոյնն « Պատուայ գաւթին » վրայ կը բացուի։ Հոս 92 ոտնաչափ երկայնութեամբ եւ 58 ոտն. լայնութեամբ կամար մը կայ, որոյ ներքեւ եւ բուն զբոսն առջեւ բարձր պատուանդանի մը վրայ դրուած է Ֆրանքլինի մեծադիր արձանն, իբրեւ հօր ելեքտրական արհեստի եւ գիտութեան։ Այս շէնքն իւր երկայն կողմանց վրայ ունի կորնթական կիսասիւնոց (pilaster) շարքեր։ Շէնքն ունի նաեւ ստորին եւ վերին պատուհաններ ի շարք։ ստորինք՝ վարի յարկին կը վերաբերին եւ ըստ յոնիական ճաշակի են. իսկ վերինք՝ վերնայարկին կը վերաբերին։ Այս շէնքին պատուհանաց գագաթն գրուած են անմահ ելեքտրագիտաց անուանքն, այլ ոչ անոնց՝ որք սակաւին կենդանի են, թողլալ որ նորա՝ զանձինս իրենց ցուցանելեօք անմահացընեն։ Շէնքին տարածութիւնն է 700 երկայն եւ 350 օտն. լայն. եւ իւր վերնայարկով ընդարձակ միջոց տուած է ցուցանելեաց։

Շէնքն իւր կողմանց կորնթական կիսասիւներով, յոնիական պատուհաններով, կամարակապ դռներով եւ տասն բարձրակատար աշտարակներով ճարտարապետական ուշագրաւ եւ յոյժ գեղեցիկ զործ մ'է։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԵԼԻՔ. — Ելեքտրական Օրոցք կը բաղկանան ելեքտրարձակ եւ փոխադրիչ մեքենաներէ, եւ զելեքտրականութիւն կիրարկող գործիններէ։ Ասոնք վերջին ամէն բարեփոխմունք կը ցուցնեն, եւ այժմու ամենակատարեալ գործիքն կը համարուին. զիստղաց համար յոյժ հետաքրքրական է տեսնել այն քայլերն՝ զորս ելեքտրական մեքենագործութիւնն առած է յընթացս քսան կամ աւելի ամաց։ Առ այս հին ու նոր գործիք իրարու արընթեր դրուած են ի բաղդատութիւն։ Չոր օրինակ. առաջին եւ ելեքտրարձակ գործին զոր Պ. Էտիսըն գործածած է, զրուած է վերջին կատարելագոյն գործւոյն քով, եւ այլ քանի քանիք։

Բուն դռնն ներս մանելուն պէս, այցելուին առջեւ կ'ենէ ելեքտրական լսարանն (theaterium)։ Այս տեսարանն նոր է իւր տեսակին մէջ եւ յոյժ հետաքրքրելի։ Հոս ելեքտրականութիւնն փոխան ահալոր եւ ահուելի որոտ մանց՝ մեզ ի լուր կը բերէ հազար եւ աւելի մոդոններով մենէ անշատեալ թատրոնի մը գաղտնիկ երգեցողութիւններն, կամ դաշն նուագածութիւնքն։ Նիւ-Եօրք կամ Պոսթըն մերձ են առ դրունս։ Հոս ուրիշ կողման վրայ կան հնուաձայն գործեաց այլեւայլ աստիճաններն իրենց ժամանակագրական կարգաւ, ամենապարզէն եւ անկտտարէն սկսեալ՝ մինչեւ ամենախառն եւ

անկատարեալն . եւ սակայն գիտենք թէ ինչ որ այսօր կատարեալ կը համարինք , վաղուան թերին եւ անկատարն պիտի համարուի . զի մարդկութիւնն յառաջդիմական հոսանքէ մը կը տարուի յառաջ եւ յառաջ , եւ իւր հետ կը տանի իւր գիտեր եւ հնարքներ : Սոյն հեռաձայն գործեաց սաղաւարին ներքեւ (pavilion), կայ նաեւ հեռաձայնի կեդրոնատեղի մը որ ի Շիզակօ գործածուած բոլոր հեռաձայներու հետ ի յարաբերութեան կրնայ դուրսիլ ի քթթեւ ական : Այս վերջինն Նիւ-Եօրքի ընկերութեան մը ցոյցքն է , եւ ունի աշխարհի մեծագոյն կեդրոնական ընդունարանն , առաւել քան հինգ հազար ի կեդրոնին : Պ . Պէլ հեռաձայնի հնարողն ունի նոր գիւտ մ'եւ . սկաւառակ մը հաստատուած է սեղանի մը վրայ , որ հաղորդակցութեան միջոց մ'է հեռակայ անձանց հետ՝ ելեքտրական լուսոյ միջոցաւ :

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՅՍ . — « Երազոց » այն « սպիտակ » քաղաքն ցերեկն երկնից վեհափառ արեւն ունի եւ գիշերն բեկեալ արեգակներ , իմա ելեքտրական լոյսեր ի լուսաւորութիւն : Ողջոյն « քաղաքն » կը լուսաւորուի ելեքտրական լամբարներով (arc light), որք իրենց 2000 ճրագի լուսերով հեշտիւ կրնան ի բաց վտարել գիշերային խաւարն որ կու գայ գեղեցկութեան եւ բնտիւր ճարտարապետութեան սոյն հաւաքածոյից վրայ ձգել իւր սեւ պատեանն եւ սքողել գայն : Ի բաց առեալ շէնքերու ներսերն՝ արտաքին գետինն լուսաւորուած է 2000 ելեքտրական լամբարներով՝ որ զգաւորաւ ձողերէ կախուած են իրարմէ 75 սան . հեռաւորութեամբ . ձեռակերտութեանց եւ գեղարուեստից շէնքն ունին ոչինչ նուազ քան 1200 լամբարներ եւ 16000 շիկալոյսեր (incondescent) : Այս մնայ շէնքի ձեղունին ի կախ կան հինգ գեղաքանդակ ջահեր (chandelier), որոց չորսն ունին 240 լամբարներ՝ 60 իւրաքանչիւրին վրայ . իսկ կեդրոնականն՝ 75 լամբարներ ունի : 500 լամբարներ՝ Երկրագործական շէնքին մէջ , 300՝ Փոխադրական գործեաց շէնքին մէջ , 250՝ ի Երազարանին , 200՝ Հանածոյից շէնքին մէջ , 50 ի Զինարանին , եւ այլն , եւ այլն : Զափաղանցութիւն , չէ եթէ ըսեմ՝ թէ « Սպիտակ քաղաքն » խաւար չունի . զի ելեքտրական լոյսեր ողողած են թէ արտաքս , եւ թէ ի ներքո շինուածոց : Իբր 130,000 շիկալոյսեր կան ողջոյն հանդիսավայրին մէջ :

Որոնող լոյսեր (search lights) նուազ հետաքրքրական չեն : Զեռակերտից եւ գեղարուեստից շէնքին տանեաց չորս անկեանց վրայ , կան մի մի որոնող լոյսեր , որք գիշերոյ լուսոյ ընդարձակ հասնելներ կը թափեն ոսկեգմբեթներու , եւ իբրու ի մթութեան հսկող աշտարակաց եւ զանգակատանց վրայ , եւ դուրս կը բերեն անոնց թաղուցեալ գեղեցկութիւններն : Անոնց իւրաքանչիւրն կարող են տասնեակներով մդոններ դրկել իրենց լուսոյ շառաւիղներն : Այցելուք բլր գեւ հեռուն են , կը տեսնեն այս լոյսերու ճաճանչներն : Միշիկըն նահանգէն եկող երիտասարդ մը կ'ըսէր , թէ այդ լուսոյ ճաճանչներն կը լուսաւորեն Միշիկըն նահանգի մէկ ընեղրեայ քաղաքի տանիքներն :

Պատուոյ գաւթին յօրինող շէնքերու ճակատներն, որպէս եւ վարչական շէնքի ոսկեգմբէթն, ունին բազմաթիւ շիկալուսոց շարքեր, որք զեղ եւ վայելչութիւն կը շոյալեն այս աշխարհի չքնաղագոյն գաւթին վրայ։ Այս բաժնին կը վերաբերին նաեւ ելեքտրական շատրուաններ, զորոց այլ ուրեք խօսած եմ։

Ելեքտրական շէնքին մէջ կան նաեւ այլ լուսավառական հետաքրքրելիք։ Չոր օրինակ. Շէնքին կեդրոնին մէջ կայ Էտիսընի լուսոյ աշտարակն, որոյ վրայ դրուած են հազարաւոր շիկալոյսեր գոյնգոյն ապակեայ պահարաններու մէջ զետեղեալ, որք ըստ փոփոխման հոսանաց՝ երփն երփն կը լուսաւորեն սիւնն, եւ երբ ամբողջ հոսանքն կը դարձուի սոյն աշտարակի վրայ՝ ոչ ոք կարէ իւր աչքերն յայն չուղղել եւ չարտայայտել իւր հիասթափ զգացմունքն ամէնընտիր բացատրութեամբք։ Հոս ելեքտրական լոյսն ամենն վայելուչ եւ ուշագրաւ եղանակաւ ի ցոյց դրուած է լուսազարդութեան նպատակի համար։ Ուէսթինկ Հաուզի ընկերութիւնն որ մրցմամբ յաղողեցաւ յինքն կորզել ելեքտրական լոյս մատակարարելու մենաշնորհն՝ զարդարած է ելեքտրական շէնքին ճակատն Քոլումպոսի կիսանդրի պատկերը. որ երբ գիշերայն լուսաւորուի՝ ի տես կը բերէ Հանգիսին զիսցաղնին բարեմոյն ղէմքն։

Ուէսթինկ Հաուզ ունի սենեակ մը՝ ուր ելեքտրականութեամբ կ'ալծակ եւ որոտումն յառաջ կը բերուի ի հաճոյս այցելուաց։ Մարմարիոնի մեծ կտորի մը վրայ մետաղաթիւով գրուած է ընկերութեան նախագրերն (initial) եւ ի հաղորդութիւն գրուած է ելեքտրական կեդրոններու հետ։ Երբ ելեքտրական հոսանքն կ'արձակուի, լուսոյ շլացուցիչ գծեր կը տեսնուին, որպէս կը տեսնենք յերկնակամարի, երբ թլփայտող ամպերով ծածկուած է։ Սոյն ընկերութիւնն ունի մի այլ խուց եւս, ուր հիւսիսայց յառաջ կը բերուի։ Այս սենեակս ապակեայ ձեղուն մ'ունի՝ որմէ վեր գոգցես ելեքտրական հոսանքներ անց ու դարձ կը խաղան, եւ յառաջ կը բերեն բնութեան փոփոխութիւններու լոյսընթերցան մին, որով օժտեալ են հիւսիսային ցրտասառոյց երկիրներն։

Կան ելեքտրական լուսոց այլեայլ ուշագրաւ խաղեր. որք յաւէտ ծանուցման նպատակի կը ծառայեն. զոր օրինակ, ելեքտրալոյս առուեր կան՝ որք ըստ հոսանաց ընկերութեան վաճառատունն կը հնչեն, եւ վաճառատունն այլք։

Ելեքտրական լուսոց այլ հետաքրքրական ցոյցեր ալ կան. 8000 ճրագի լուսով լամպարներ կան, կան նաեւ 116 ճրագի լուսով շիկալոյս, որոց մինչ առաջինն արփոյն նման կը ճաճանչին, մեքլինք Խուսկներու (լուսաւոր որդ մ'է) նման կը պլպլան։ Գաղղիացիք իրենց բաժնին մէջ ունին փարոսի ճրագ մը, որ 200,000 ճրագի լոյս կրնայ տալ։

Ճէնէրը Ելեքտրիկ ընկերութիւնն, եւ այլ նմանք ի ցոյց դրած են ամէնընտիր զովարար հովանարներ, որք անխոնջ՝ անընդատ կը հոլովին իրենց կեդրոնական առանցքին վրայ, եւ կը մաքառին ամրան կիզիչ օթթին հետ։ Ինչ հաճելի է յետ խոնջութեանց եւ քրտանց, պահ մը դիտել սոյն գործիքներ որ զովութիւն մը կը սփռեն շուրջնակի։ Միտուէջ ֆլէզանսի մէջ կայ Ալպեան տեսարան մը, ուր լեռանց իրակերպ նկարներու ետեւ եւ

Եւքտրաշարժ հովանար մը պաղ եւ զովարար հով մը կը զրկէ, որ զոգցեո իւր պաղուծիւնն ձինապատ սարերէն առած է, որպէս Զուիցերացի գեղջուկն ալ իւր եղանակաց ելէլն զանալիժող առուակաց խոխոշներէն: Նոյն ելեք-տրականութիւնն սր կը լուսաւորէ վաճառանոցն՝ ի բաց կը վաարէ նաեւ ճանճերն՝ այն անկող հիւրերն, որք յաճախ կը վրդովն մեր հանգիստը:

Հոռ ցուցուած են նաեւ ելեքտրականութեան այլ անտեսագիտական գործածութիւնք: Ելեքտրական բովէք մը կայ, ուր երկաթն կը գրուի պահ մը, եւ ահա շէկ կարմիր դուրս կ'առնուի պատրաստ կուանուելու. կայ գործնալ նոյն ելեքտրական զարնոցին մէջ մի այլ նոր եղանակ զարնութեան: Եւրկաթագործն իւր ելեքտրական ունելիով կը բռնէ երկաթի կտորն եւ կը մխէ ելեքտրական հեղուկ մը պարունակող զոյլի մը մէջ, եւ ահա հուր մը կ'արւտաբերի եւ կը ջեռուցանէ կուանելի երկաթն. ելեքտրական խոհանոց մը տեւսայ, ուր բնութեան սոյն բնկնեալ գորութիւնն կը գործածուի ստանին նպատակի համար: Բնկերական եւ ուսումնական կենաց վարժ փափկառուն տիկիներն՝ այլ եւս պէտք չունի սեւտելու եւ մրտտելու իւր ձեռքն, այլ միայն զւպելու է ելեքտական կոճակին, եւ ահա ջուրն կ'եռայ եւ կերակուրն կը պատրաստուի, առանց ծովի, առանց մուրի եւ առանց ջերմութեան սպաւման: Կանանց տիպար Հիւանդանոցին մէջ, ի հանգիստալոյրի կերակուրք եւ սպեղանիք այն միջոցաւ կը պատրաստուին:

Յոյժ հետաքրքրական են Էտիսընի ձայնագրական գործիք, որոցմէ հարիւր տուրներ կան մեծ շէնքերու դրանց քով: Զգէ հինգ անճր՝ եւ ահա կը լսես կամ ծիծաղաշարժ կատակերգակ մը՝ որ իւր բարձր քրքիչներով եւ զուարթ բանիւք զքեզ կը զուարճացնէ, եւ կամ կը լսես երգիչ մը՝ որ կ'եղանակէ գաշն ձայնիւ եւ հոգւոյդ ամենագնիւ զգացումներն կը զարթուցանէ, եւ կը թըրթուցնէ սրտիդ նրբագոյն թելերն:

Էտիսընի ձայնագրական բաժնին մէջ կայ գործիք մը որ ձագառաձեւ մաս մ'ունի. այս « ձագառն » կը կարողացընէ ամէն անձ լսել նոյն եղանակն, որ ձայնագրուած է թաւալող զլանին վրայ, եւ այս առանց լսողական խողովակներու գործածութեան: Զեռագործութեանց շէնքի վերնայարկին մէջ նա հանգային կրթական բաժիններէն մին գնացի, հոն կայ Էտիսընի ամենակատարեալ գործիչներէն մին, որ ունի այլեւայլ լսողական խողովակներ, զորս գործածեցին իբր երկսառնեակ մը անձինք: Լսեցինք օրիորդի մը թուաբանական խնդիր մը լուծելն այնպիսի ճշգրտութեամբ, որպիսի ճշգրտութեամբ պիտի լուծինք եթէ գասարանին դուռն կանգնած բլլայինք: Լսեցինք նաեւ ամբողջ դպրոցի մը հեշտանուագ ձայնաւորութիւնն: Մը. Էտիսըն ունի նաեւ յատուկ սենեակ մը ուր իւր վաճառականական ձայնապիւր գործին յանձնդհատ գործածութեան է: Եւրոպական կաճառի մը որդումներն, բանակցութիւններն կը զըրկուին թղթատարով, եւ ահա գլանն՝ հոս կ'արտաբերէ զոր ինչ անդ խօսած են:

Ի ցոյց դրուած են եւ կը գործածուին նաեւ ենթածովեայ հեռագրական գծերու եւ գործեաց նմոյշներ: Այս գործիք զմեզ անմիջական հաղորդակ-

ցութեան մէջ կը գնէ հազարաւոր մոնետերով անջատեալ վայրերու հետ : Նորութիւն մ'է հեռաձեռնագիր գործին՝ զոր Պ. Կրէյ Ամերիկացին ի լոյս բերաւ յետ տաժանակիր տընութեան եւ աշխատութեան : Այս գործիքն նոր գիտ մ'է, որով երկու հեռաւոր քաղաքներու մէջ միեւնոյն անձն կրնայ գրել միեւնոյն ատեն . որպէս կարելի էր ցարդ հնչելի ընել մի և նոյն ձայն երկու քաղաքաց մէջ, այսօր կարելի է միևնոյն ձեռաց շարժմունք զգալի եւ տպաւորիչ ընել երկու անջատ վայրերու մէջ : Անձ մը կրնայ այժմ խօսիլ եւ ապա համաձայնութիւն մը ստորագրել, առանց տեղէ տեղ երթեւեկելու դժուարութեան ենթարկուելու :

Հանդէս կը տարբերի յայլ նմանեաց՝ իւր ընտիր ելեքտրական վայրաշարժներով (locomotive) : Փարիզի Արհեստահանդիսին մէջ կը հաւաստեն թէ չկար զարգացեալ երկաթուղի մը՝ որոյ վրայէ ելեքտրաշարժ մեքենայք եւ կառքեր երթեւեկէին . ինչ որ կար փոքր աստիճանաւ ցոյց մ'էր . հոս կայ վերամբարձ երկաթուղի մը՝ որոյ վրայէ ելեքտրական կառախմբոյ (չորս ընդարձակ կառքէ բաղկացեալ) մը անիւներն կը գլորին զօր հանապազ : Թէ եւ ելեքտրական ցոյց (exhibit) մ'է, այսու հանդերձ դրուած է ճէնէրը Ելեքտրիկ ընկերութեան կողմէ շահագիտական նպատակաւ : Այս երկաթուղին օձողոր կը զալարի հանդիսավայրին մէջ այսր եւ անոր այցելուներն փոխադրելով, եւ կամ անոնց շէնքերու արտաքին երեւոյթն պարզելով : Յայս վայր կը կարծէին, եւ դեռ կարծողք մեծամասնութիւն եւ մեծ հեղինակութիւն ունին, թէ միակ ելեքտրաշարժ մեքենայ մը լաւագոյն միջոցն չէ կառախմբեր շարժելու, սակայն կարելիութիւնն խնդրոյ առարկայ չէ, այլ շահաւորութեան : Այս կառախմբն կը տարբերի յայլոց այնու՝ զի հաղորդիչ մետաղաթելք ենթուղեայ են, որ յոյժ խափանիչ է մանաւանդ մեծ քաղաքաց մէջ, ուր փողոցներ արդէն առաւել քան զչափ խռնեալ են հեռագրոյ և հեռաձայնի թելերով եւ յոյժ անտանելի են մանաւանդ մեծ հրդեհներու ատեն :

Ելեքտրական վերելակներ (elevator) եւս կը տեսնուին բոլոր մեծ շէնքերու մէջ : Կը սեղմես ելեքտրական կոճակն, եւ ահա շիկալոյս մը (ցարդ զանգակ մը) կը ծանուցանէ վարչին : Վերելակն կը սկսի շարժիլ ի վեր կամ ի վայր, եւ ահա շիկալոյս մը քեզ կը ծանուցանէ վերելակին գալուստն :

Փոխադրական՝ գործեաց շէնքին մէջ վերջին տարիներու մէկ նոր գիւտն, զոր իտալացի մը կարծեմ հնարած է, եւ ցոյցն իտալական բաժնին մէջ է . գործիքն կ'արձանագրէ երթեւեկող կառախմբոց համեմատական զրբերն մինչ ի շարժման են, Ենթուղեայ ելեքտրական կոճակներ երբ կ'ընդունին կառախմբոց ճշուամբ, իսկ եւ իսկ կը հաղորդեն ժամանումն ի կայարանին : Այս՝ յոյժ շահաւոր գիտ մ'է եւ սիրելի է հաւատալ, թէ մեծապէս պիտի դիւրացնէ կառախմբոց ընդհարումներն արգիլելու կենսաշահ գործն :

Ելեքտրականութիւնն անցեալներն վարպետ զոգ մը բռնեց Հանդիսավայրին մէջ : Երբուկ մը որ իւր կենաց վերջին օրերն գողութեամբ անցնել կը շնար, բանտի մէջ թուի թէ պիտի կնքէ իւր կեանքն եւ անիծէ եթէ

յօրէնէ ելեքտրականութիւնն որ մատնեց իւր վարպետ արհեստն : Բաժնի մը մէջ որ մանր մունր գողութիւններ կը պատահէին ժամանակէ մը ի վեր՝ ցուցունելեաց ի պաշտպանութիւն՝ ելեքտրական թակարդ մը ներմուծուած էր : Ժերուկն ըստ սովորութեան կրկին կը մօտենայ ցուցանելեաց եւ կը ջանայ կրկին ընտրել իւր զոգօնն, երբ կը բռնուի թակարդէն, որ եւ զանգակի հնչմամբ մը կը ծանուցանէ ոստիկանական կայարանի մը մէջ՝ անկող հիւրին այցելութիւնն : Եւ ահա ոստիկանք կը դիմեն ըստ ուղղութեան զանգակին՝ ճիշդ յայն վայր, ուր ժերուկն կը ճգնէր արդէն ճողոպրել գինքն կապող թակարդէն, եւ կը տանին զնա ուր չէր ուզեր : Հասարակ են այժմ մեծ վաճառատներու պատուհաններու մէջ այսպիսի գողարգելներ, որք առ երեւոյթս պատուհանի զարդերու կը նմանին, բայց ի ներքուստ թակարդներ են, եւ կը ծանուցանեն ճշտիւ իրենց մատչողներու անարբար նպատակներն, եւ ահա ոստիկանք ի դէպ ժամանակի կու գան ընդմիջել գողին պայծառ երազներն օրինաց եւ արդարութեան ձեռքը : Այս գործեաց փոքրագոյն տեսակներն կը գործածուին ընդդէմ կասկածառներու : Կը դրուին վերարկուներու մէջ եւ ահա անզգոյշ գողն կը մատնէ ինքզինքն յանգէտոս ուր շոինչ մը արձակել տալով : Կան ելեքտրական լուսաշափեր, գինաշափեր, եւ այլ նման ամենանորը գործիք : Ասոնք ամէնքն ալ վերջին ամաց յաջողակ գիտեր են :

Կ. Մ. Մանավեան

Շարայաբեչի

Դ Ե Ղ Ձ Ա Ն Ի Կ

(Տես յ'էջ 492)

ԱԶԳԱՅԻՆ ԴԵՂՁԱՆԻԿ. — Մնացած մասն ալ մարդս ամբողջացուցեր է : Եւրոպայի ամէն ազգ ուզած է իրեն ազգային զեղձանիկն ունենալ : Բեռլինացիք՝ Փրանդորիական դպրոցի հին արուեստական աւանդութեանց հաւատարիմ մնալով՝ թռչնաց այնպիսի զարմանալի սերունդ մը ստեղծեր են, որոնք իրենց վայելելու և տոկուն կերպարանքով և միանգամայն նարնջագոյն պայծառութեամբ նշանաւոր եղած են : Գաղղիա՝ ջանալով փայլուն գոյներ ստանալ՝ յառաջ բերեր է սպիտակ զեղձանիկները, որոնք օտար ազգաց մէջ բաւական յարգի են : Տիրուի և Հարցի թռչնաբոյծքն ջանացած են միայն քաջ երգիչ հասցնել : Ասոնք ամէն տարի Լոնդրայի վաճառանոցները այնպիսի թռչուններ կ'ուղարկեն, որոնց երաժշտական կրթութիւնն ամենակատարեալ է : Տեղեակ մէկն առաջին անգամ տեսնելուն, և ոչ քառասուն դանկ կու տայ այս գերմանական զեղձա-